ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԸ ՄԻՆՍԿՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 15—19 օրերին Բելոռուսիայի մայրաքաղաք Մինսկում տեղի ունեցավ Քրիստոնեական Խաղաղության Համաժողովի միջազգային քարտուղարության նիստը:

Մինսկի և Բելոռուսիայի միտրոպոլիտ Ֆիլարետը նորակառույց շքեղ առաջնորդարանում ընդունելով աշխարհի 15 երկրներից ժամանած Միջազգային քարտուղարության և ՔԽՀ-ի մի շարք անդամների՝ կարդաց Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի՝ ժողովի մասնակիցներին ուղղած գիրը:

Իր կենդանությամբ, անդրադառնալով ՔԽՀ-ի 1986 թվականի աշխատանքներին, Համաժողովի գլխավոր քարտուղար Լյուբոմիր Միրեժովսկին նշեց այն փաստը, որ խաղաղության տարին՝ 1986-ը, բարեբեր եղավ ներկա կազմակերպության համար. այն գործոն մասնակցություն ցույց տվեց ՄԱԿ-ի և այլ ոչ պետական կազմակերպությունների որոշումների գործադրմանը:

ՔԽՀ-ի Միջազգային քարտուղարությունը ի մասնավորի դրականորեն նշեց Սովետական Միության խաղաղասիրական գործունեությունը և կոչ արեց ԱՄՆ-ին և այլ եվրոպական պետություններին՝ հետևելու ՍՍՀՄ-ի օրինակին:

Միջազգային քարտուղարությունը մեծ գոհունակությամբ նշեց նաև այն, որ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի բարեհաճ համաձայնությամբ ՔԽՀ-ի Մերձավոր Արևելքի հանձնախումբը իր հավաքը կգումարի 1987 թվականի հունիսին Ս. Էջմիածնի կամարների ներքո:

Ժողովի ընթացքում ծրագրվեցին ՔԽՀ-ի գալիք՝ 1987 տարվա աշխատանքները:

Սույն ժողովին, հանուն Հայ Եկեղեցու, իր մասնակցությունը բերեց ՔԽՀ-ի աշխատանքային կոմիտեի անդամ, Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Տ. Անանիա եպս. Արաբաջյանը: